


Պ.ՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄՆճ.
Գաւառաց 10 ՄՆճ.
Վեցամսեյ Կ. Պոլսոյ 4 ՄՆճ.
Գաւառաց 5 ՄՆճ.
Ծանուցման տողը մէկ անգամի հաւար 3 դուրուշ, երկու անգամի հաւար 2 դուրուշ, աւելի անգամներու հաւար դատ սակարկութիւն կըլայ :



ԼՐԱՔԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պատերազմական լուրերը տակաւին կարևորութեան զուրկ են, թէ պէտ է մեծամեծ դէպքեր կ'սպասուին : Ռուսք Բելգիայի շրջակայքը զօրութիւն գումարներու զբաղած էին, բայց միւս կողմէ Սիւլէյման փաշա և Մէհմէտ Ալի փաշա լինումին կը ներդնէ : Սօխումի արշաւանքը վերջացաւ, և այն կողմը գումուտոյ կայսերական զօրքն ետ բերուելով Բուսիլի բանակները զրկուեցան : Այս արշաւանքը բոլորովին անօգուտ չեղաւ, և փան զի Ասիոյ կողմը Ռուսաց յառաջադիմութիւն մեծ քնաս տուանոնց օգնութիւն հասնին արգելելով : Քանզի թէ և իրենց պատերազմաւոր բանակներէն դուրսեր բաժնելով Սօխումի կողմը չըրկեցին Օսմանեան զօրաց և ապաստարաց դէմ կըսուեցու համար, սակայն այն կողմէն ալ զբաղելով չկրցին իրենց բոլոր զօրութիւնը կարսի և Պաթմուսի վրայ թափել : կարծեմք այս եղելութիւնը մեծապէս նպաստեց Ռուսաց պարտութեամբ յետո նահանջման : Բայց հիմայ որ իրենց արշաւանքը վերջացաւ, և ձմեռը վրայ կուգայ, Օսմանեան կառավարութիւնը նախամեծար համարեց իւր Սօխումի զօրութիւնը Բուսիլի վտխարել, ուր միշտ զօրքն պէտք կայ : Բայց Սօխումի արշաւանքն ուրիշ օգուտ մ'ալ ունեցաւ : Քառուսն յիսուն հազարի չափ Ապագէի ու Չէրքէզ գաղթականք ալ եկան, և ասոնցմէ խիստ ընտիր հեծեւ լազորաց դուրսեր կը կազմուեն, որք կրնան մանաւանդ հետադրութեանց և յառաջապահի կուռոց մէջ մեծ ծառայութիւններ ընել : Բայց քայլին նկատմամբ իրենց պահուութիւնն ինչ որ ալ ըլլայ, Չէրքէզներուն և Ապագէիներուն պատերազմական յատկութիւններն անուրանալի են : Յիշեալ գաղթականաց գիւղերը Ռուսաց կողմէն հրոյ ճարակ եղած են, և կողկասի ապստամբութիւնն, որ քանի մ'ամիս առաջ մեծ կարևորութիւն առած էր, այսօր հրով և սրով խեղդուած է : Հարիւրուոր Չէրքէզ ընտանիք Ռուսիոյ հիւսիսային գաւառները փոխադրեցան, տախարակ և ցուրտ տեղեր, ամեն կողմէ Ռուսերով շրջապատեալ, ուր այսուհետեւ անկարելի է ապստամբել : Այսպէս կրնայ կողկաս խաղաղեալ համարուել : Բայց թուրքիս եկող գաղթականք աւելի մեծ դուռնութեամբ և կատարութեամբ պիտի պատերազմին Ռուսաց դէմ : Օսմանեան զօրաց կարգերուն մէջ :

Ասոր փոխարէն Ռուսիա ալ Բ. Դրան հպատակ իշխանութեանց կողմէ օգնութիւն կը պահէ : Ռուսիոյ

Իշխանն իւր զօրք արդէն պատերազմի ասպարէզն է, և Սերվիոյ իշխանն ալ թօփօնի էր բանակն և Պէլկրատի բերդն աչքէ կանցունէ՝ անշուշտ անմիջապէս գործի սկսելու համար : Սերվիոյ այս ընթացքն անհաւատարմութեան տիպար մը կրնայ ըլլալ : Տակաւին քանի մ'ամիս առաջ, երբ ներկայ պատերազմն հրատարակուած չէր, հաշտութիւն խնդրեց Բ. Դրանէն, որ Եւրոպական տէրութեանց յորդորը նկատողութեան առկայի խիստ չարաւոր պայմաններ չնորհեց Սերվիոյ : Ռուսիա ալ այն ժամանակ խրատ տուաւ Սերվիոյ կառավարութեան որպէս զի հաշտութիւն ընէ : Հետեւեալ Օսմանեան զօրքը Սերվիոյն քաշուեցաւ : Աստորիա կարգերու Ռուսաց Սերվիոյն անցնին, և յոյս կար որ այս իշխանութիւնը խաղաղութիւնը կը յորդէ : Ռուսք իսկ 'ի սկզբան կարհամարհէին Սերվիոյն և Ռուսիոյ գործակցութիւնն, որպէս թէ անոնց բնաւ պէտք չունենալով : Բայց երբ Բելգիայի առաջին պարտութիւնը վրայ եկաւ, Ռուսիա պարտաւորեցաւ թուրքո-Մակարէլ գանուած Ռուսիոյ զօրքաբաժինն օգնութեան կանչել, և հուսկ ուրեմն կարողութիւնն իւր և դաշնակից ճանչեց : Նոյն միջոցին կըսուէր թէ Սերվիա ալ պիտի շարժի : Եւրոպական տէրութիւնք ալ դարարութիւններ ըրին 'ի Պէլկրատ որպէս զի իրենց միջնորդութեան չընորհէ կըքուած հաշտութիւն մը չը բաւարարի : Սերվիա իւր Կ. Պոլսոյ գործակատարին բերնով ապահովութիւն կուտայ միշտ իւր դիտմանց վերայ : Բայց կերակ որ'այս ամենն ալ 'ի դերու պիտի ելնեն : Չարին բանակակերպութիւն Պէլկրատ զրկուած բարձրատիման անձինք բանակցութիւններ ըրին, որոյ վրայ Սերվիոյ շարժման զրոյցներն աւելի հաստատութիւն գտնել սկսան : Այս ալ կը ցուցնէ որ Արեւելից մէջ ինքնօրէն իշխանութիւնները պարզապէս Ռուսական դուռնութեան են, և Բելգիոյ պարտութիւններէն զնացած հրամանաց աւելի պիտի հնազանդին քան թէ Բ. Դրան կամ Եւրոպիոյ ազգաբարութեանց : Անգղիոյ և Աստորիոյ հիւպատոսներն յորդորեցին Սերվիա որ նորէն ապստամբութեան դրօշ չարքդէ, որոյ պատասխանատուութիւնն ու հետեւանքն իւր վրայ ձգեցին : Բայց այս տէրութիւնը նիւթական միջոցներ ձեռք չառին Սերվիա իւր անհաւատարմութեան արգելելու համար :

Աստորիոյ կէս պաշտօնական թերթերը կը յայտարարեն թէ Վիեննայի արքունիքը չկրնար ներել որ Սերվիա Ռուսիոյ դաշնակից ըլլայ, կամ Ռուսք Սերվիոյ վրայէն արշաւեն : Բայց եթէ Սերվիա ինքնազուլ պատերազմ հըրատարակէ, չկրնար արգելուլ զայն :

Ստիւտտականութիւնն ասկէ աւելի զօրաւոր փաստ մը չէր կրնար հնարել : Սերվիա դաշնակից չպիտի ըլլայ եղեր Ռուսիոյ : Ռուսք Սերվիոյ վրայէն չը պիտի քայլեն Օսմանեանց դէմ, բայց Սերվիա ինքիւն պիտի կրնայ թընտնանութիւն ընել Բ. Դրան դէմ, որպէս թէ այս ալ Ռուսաց օժանդակութիւն մ'եղած չըլլար : Կը կարծուի որ Աստորիա այնչափ բուռնած է երկից կայսերաց դաշնակցութեան մէջ, և Պէլկրատի արքունիքն, որ իրեն անուղղակի կերպով 1870-71ի պատերազմին ժամանակ օգնող Ռուսիոյ ընկճիլը չուղեր, այնչափ ճնշում կը գործէ 'ի վիեննա, որ Աստորիա կը պարտաւորի ամեն Մակարէլական կարգադրութեանց հաւանութիւն տալ, որք իրեն ուղեղն ալ յարմար կուգան :

Ասիոյ կողմը կէտիքէրի պատերազմէն 'ի վեր նշանաւոր լուր մը չը կայ : Այս պատերազմն օգոստ. 12-13ի գիշերը սրոշուած էր Մուսլիմար փաշայի վրանին մէջ, որ Օսմանեան զըլխաւոր հրամանատարներն հրաւիրելով վեհ. Ապալիւ-Համիա Բ. կայսեր դահաւարութեան առաջին տարեգարծը փառաւոր յաղթութեամբ մը տօնել առաջարկեց : Հրամանատարը «Փառաշահեմ չ'օք ետաջ», աղաթարու ընդունեցին այս առաջարկութիւնն, և հետեւեալ առաւօտուն կանուխ Մուսլիմար փաշա անձամբ բանակին աջ թեւին հրամայելով Գըզըլ-Թէփէի վրայ յարձակեցաւ և զրուսեց զայն : Նոյն օրը, 13 օգոստ. որ շաբաթ էր, կէտիքէրի մեծ պատերազմն եղաւ, ուր Ռուսք իրենց բոլոր դիւրերը թողնելով յետո նահանջելու պարտաւորեցան երեք հազարի չափ կորուստ տալով : Լօրիս Մէլիքօֆի զօրավարին հեռագիրը չկրնարով այս պարտութիւնը ծածկել, կըսէր թէ Գըզըլ-Թէփէ միայն վաշտ մը Ռուսաց զօրք կար : Այս խտտովանութիւնը պատճառ կուտայ Օստորիա անհողութիւն մ'ըրած էր, որմէ Օսմանեան սպայակցան անմիջապէս օգուտ քաղելու փութաց : Հետեւեալ Լօրիս Մէլիքօֆի պաշտօնանկ եղած և կողկասեան բանակին հըրամանատարութիւնը Միքայէլ Մեծ Գուքան տոսնձնած է :

Կարինէն օգոստ. 28 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մէհմէտ Մուսլիմար փաշայի բանակէն 300 Գալափախք ձիաւորք սահմանադրութեան անցնելով մինչև Ալքսանդրաբոլէն Տիֆլիս տանող ճանքուն մէջ յառաջացեր, և 130 թիւանութմաձիգ ձիեր, զորս խաղախները գաշտին մէջ կը ճարակեցնէին, բաներ և հեռագրական գիծերն ալ խորասակելով ետ գարծեր են : Բայց ճանքան հինգ հարիւրի չափ Ռուս ձիաւորք ասոնց վրայ յարձակելով, քանի մը ժամ կուսելէ ետեւ 'ի փախուստ դարձեր են :

Պ.ՅՄԱՆՔ

Կորս զօրք յարգաց ճանրուած արքը խորագրութեան վրայ է : Արագ քայլ վերաբերեալ նամակ կամ որ և իցէ զրուսիս խորագիրը Տեղեկին պիտի ուղարկուի, զարաթիս Սանտըքըլար ճատակի թիւ 198 : Կորս խան, Մասիսի գրասենեակը : Հանրու ծախքը չիճարուած նամակ չընդունուիր :

Նոյն թուականով Նօյլի—Պաղարի զինուորական հրամանատար Հաֆըզ փաշայէն եկած հեռագիրը մ'ալ կը ծանուցանէ թէ Նիքիտիչը սրջալորող 5000 ի չափ Գարատաղցուոց դուռնամը, յիշեալ բերդին անձնատուր ըլլալէն ետեւ չէրուեցի Պաղարիներուն մէջ Տրուսիաբար ըսուած տեղը դըռնուոց քանի մը վաշտ Օսմանեան զօրաց վրայ յարձակելով առաւօտէն մինչև գիշեր սաստիկ կուխ մ'եղեր, և վերջապէս Գարատաղցի յաղթուեր 'ի փախուստ դարձեր են 300 մեռեալ թողնելով :

Վիտինի կառավարչէն օգոստ. 29 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գալափախ թու վիտինի մէջ յաղթութեամբ կը շարունակէ, և արդէն Գալափախ գրեթէ բոլորովին աւերակ դարձած է : Վիտինի մէջ ալ քաղաքն թիւ տուններ, միկիթներ և այլ շէնքեր կործաներ և բաւական թուով բնակիչք վերաւորուեր են :

Ռահօփայի և Ռուսուոզի հետ ալ սահմանութիւնը կը շարունակէ :

Նիքիտիչի առումն ստուգուեցաւ : Մէլի պահապան զօրքն որ 2000 ի չափ կը հաշուեն, մինչև վերջը քնշութեամբ դիմադրեր է Գարատաղցուոց ումարկոմութեանը, բայց ուտելին սպառուելով հարկադուեր է պատուաւոր պայմաններով անձնատուր ըլլալ : և Գարատաղցիք ալ յարգեր են պայմանները :

Էֆենթ Էրըւտ կըսէ թէ Նիքիտիչի առումներուն վրայ ցաւելու պատճառ մը չկայ որովհետեւ մէջը գումուտոց 2000 պահապան զօրքը պարէնաւորեալու համար մինչև հիմա միջին հաշուով 4000 զօրակաւ գոհուեցաւ : և եթէ տակաւին դիմադրութիւնը շարունակէր, ո՞վ գիտէ դեռ ո՞րչափ կեանք պիտի զոհուէր պաշար հասցնելու համար :

Էֆենթ Էրըւտ ասկէց անթիւ առնելով դիտողութիւն կըսէ թէ այդանչան բերդը Գարատաղցուոց տալ չուղուիլը քաղաքական մեծ սխալ մ'էր : Եթէ, կըսէ, Բ. Դրուս վերջին բանակցութեանց ժամանակ Գարատաղի ինքնանայ զիջանէր և այդամիտն անոր տար, Գարատաղ գոհ ըլլարով վերատին 'ի գէն չէր դիմեր, և Ռուսիա ալ Բ. Դրան դէմ պատերազմ հրատարակելու պատրուակ չէր կրնար բանել այս բանը :

Մէհմէտ Ալի փաշայի և Օսման փաշայի բանակներէն պաշտօնական լուրեր չկան, կամ եթէ կան դեռ չեն հրատարակուած :

Մանուսուր տեղեկութիւնք կը ծանուցանեն, կըսէ Էֆենթ Էրըւտ, թէ Ռուսերն Օսման փաշայի բանակը չորս կողմէն շրջապատելու կաշխատին, և

ասոր համար իրենց բոլոր զորութիւններն այն կողմը կը գումարեն եղբր :

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Սեպտ. 21 1/2 ժուով Սիւլէյման փաշայէն եկած հետաքրքիր մը կը ծանուցանէ թէ առջի օրը ժամ 3 1/2 քէն ըսկըսեալ Օսմանեան թիւղանօթները սասակապէս ու մտնողներ են Շիրակայի Ռուսաց զորքը : Ռուսերն ալ նոյն սասակութեամբ պատասխաններ են մինչև ժամ 8, և այնուհետև լուրեր են : Իսկ Օսմանեանք մինչև գիշերուան ժամ երկուք կրակը շարունակելով մեծ զնատ տուեր են թշնամուոյն :

Սեպտ. 11 1/3 թուով Ահմէտ Մուխթար փաշայէն եկած հետաքրքիր մ'ալ կը ծանուցանէ թէ նոյն առաւօտուն Ռուսերն 16 վաշտ հետեակ և 6 գունդ հեծեալ զօրք և քսանակ զորս թընդանօթով կայտի մօտ Մուխթար փաշայի ձախ թեւին վրայ յարձակեր և մինչև ժամը 10 կռուելէ ետև յաղթուեր ետ քաշուեր են :

Օգոստ. 31 թուով հետաքրքիր մ'ալ կը ծանուցանէ թէ Արտահան գտնուող ռուսական զօրքն Օսմանեան զօրաց մօտենալն իմանալով քաղաքէն ելեր Լճիկ-Օղլու թափախ մարտիցը քաշուեր են : Ասոր վրայ երևանայ Ռուսաց բանակէն 8 վաշտ զօրք օգնութեան զրկուեր են Արտահան :

Իւրոպական վերջին թերթերուն բերած տեղեկութիւններէն ալ հետևեալները կը քաղենք :

Լոնտրա 6 սեպտ.— Սթամբուլ լրագրին կը հետազօրեն թէ Լոֆայի կռիւն Օսմանեանք սկսեր են քաղքին առջևը կեցող Ռուսական զօրաց վրայ յարձակելով : Ռուսք ինն անգամ թուրքաց յարձակումն ետ մըղելով վերջին անգամուն իրենք ալ անոնց ետևէն քաղաքը մտեր են, ուր փողոցներուն մէջ կատաղի կըռուէ մ'ետև թուրքերը քաղաքին միւս կողմէն գուրս ելնելու և Բլէյնա քաշուելու ստիպուեր են :

Միլան իշխանը ծանուցեր է Ռուսիայ կայսեր թէ 80000 զօրք կը պատրաստէ, որոց կէսը Սերբիայ մէջ պիտի թողու երկիրը պաշտպանելու համար, և միւս կէսին գլուխն ինքնանցնելով ուղղակի Շարքէյի վրայ պիտի քաշէ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէլլրատ 11 սեպտ.— Իշխանին կառավարութիւնը ծառայէ յէֆ Ռուս զօրավարին առաջարկած վիճակուողական ծառայութիւնը մերժեց : Հետեւաբար յիշեալ զօրավարը Պէլլրատէն մեկնելով Մոսկուա գնաց :

Փարիզ 11 սեպտ.— Պ. Կամպիլիթայի փաստաբանն հիւանդ ըլլալուն պատճառաւ ինք ալ չկըրնարով ներկայանալ դատական տունին, հետևաբար երեք ամիս բանտարկութեան և 2000 ֆրանք տուգանքի դատապարտեցաւ ի բացակայութեան :

Վիեննա 11 սեպտ.— Անտրասի կոմսն և Պիտարը իշխանը տեսակցութիւն մը պիտի ընեն ի Սալցպուրկ :

Փարիզի Գերմանական դեսպան Հոհենլոհէ իշխանն ալ ներկայ պիտի գտնուի այս տեսակցութեան :

Բէլլրատ 12 սեպտ.— Արևելից անցքերուն վրայ նոր հարցում մը պիտի ըլլայ երեսփոխանաց ժողովին մէջ :

Փարիզ 12 սեպտ.— Պ. Կամպիլիթա երեք ամիս բանտարկութեան և 2000 ֆրանք տուգանաց դատապարտեցաւ :

Պ. Ռոջիտի միակ որդին մեռաւ : Լոնտրա 13 սեպտ.— Անգլիայ ծովակալութիւնն 30 հատ նոր թօղիլակի շոգենաւ շինել հրամայեց :

Ավալան և Տօրէսի անուն պատերազմական նաւերը Բօրթօնի մօտ իրարու զարնուելով, երկուքն ալ ծովասոյգ եղան, և 90 հողի խեղդուեցան :

Վիեննա 13 սեպտ.— Տրէնտի միջոցով լրագրին, որոց կառավարութեան հետ յարաբերութիւն ունենալն յայտնի է, յօղուած մը կը հրատարակէ, յորմէ կը հասկցուի թէ Աւստրոսլոնիայի կառավարութեան կողմէն և փաստաբան ձեռնարկէ, և թէ Սերբիա ապերախութիւն կընէ Օսմանեան կառավարութեան վեհանձնութեան դէմ, և ինքզինք անբութեանց պաշտպանութեան անարժան կը ցուցնէ :

Օսմանեան դեսպանատան զինուորական կցորդը Քալաթ երթալով զինուորական վարժութեանց փորձերուն ներկայ գտնուելու, ժողովուրդն ետանդագին համակրութեան ցոյցեր ցրաւ, խնդակցութեան ուղերձ մ'և դափնի պատկ մը տալով իրեն :

Փարիզ 14 սեպտ.— Պ. Թիէրի մեռնելէն ի վեր լրագրաց ունաց լեզուէն կը հասկցուի թէ չարաւոր հանրապետականք Մարք-Մահոն մարշալստին մօտենալու միտում ունին :

Սթէնք 14 սեպտ.— Նախարարաց խորհրդոյ նախագահ Գանարիս ծովակալը կաթնուածաշար ըլլալով վտանգաւոր կերպիւ հիւանդ է :

Պուրէշ 14 սեպտ.— Ներկայի կրճիւն մէջ Ռուսաց վիճակին վրայ գէշ զրոյցներ կը սրբորին : Նիկոպոլի առջև ինուած նոր կամուրջը դեռ աւարտած չէ :

Կայսրորդու թանակը խել մ'արեւնուող կռիւներէ ետև բարձրովն Եսանթրայի միւս կողմը քաշուեցաւ :

Սեպտ. 11 ին Ռուսիաները Բլէյնայի մօտ 269 մեռեալ և 1031 վիրաւոր ունեցան :

Table with 2 columns: Լոնտրա 14 սեպտ, Օսմ. Քօնս., Փօլս., 1865, 1869, 1871, 1872, 1873, Եղիպտ., Անգլ. Քօնս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիէ. Սուլթանը չորեքշաբթի իրիկուն ճաշի հրաւիրեց մայրաքաղաքիս պարսկական դեսպան Միրզա Մօհսին խան, և սիրով ընդունելութեամբ պատուեց Ն. վսեմա թիւնը :

Թղթագրամին Պէլլիկներու և Մէթալլիքներու հետ ունեցած տարբերութիւնն օր քան զօր աւելի զգալի ըլլալով, գաւառաց ոմանց իշխանութիւնները Բ. Դրան դիմեցին հոսկընալու համար թէ կառավարութեան անտուկները Պէլլիկ և Մէթալլիքի գնով թղթագրամ ընդունելը պէ՛տք է շարունակեն :

Այս խնդիրը Պետական խորհրդէն և նախարարաց ժողովէն քըննուելով որոշուեցաւ որ արգի կանոնը պահուի, և կառավարութեան անտուկներն ըստ առաջնոյն թղթագրամ ընդունելը շարունակեն :

Սոյն կանոնը պիտի պահուի նաև մասնաւորաց պայմանագրութիւններուն մէջ, ի բաց աւել ալ պայմանագրութիւններն որոց մէջ բացորոշապէս պայման դրուած է որ վճարումներն ոսկով կամ արծաթ մէճիտիտով պիտի ըլլան :

Սոյն որոշումն Եպարքոսական հըրամանագրով կուսակալաց հաղորդուեցաւ :

Լէվոնթ Հէրբէլի մէջ կը կարգանք թէ անցեալ տարի Սէլանիկի մէջ Գաղղիայ և Գերմանիոյ հիւսիս-արևմտայ սպանութեան պատճառաւ Հնօդօսի և Վիլիսի մէջ բանտարկեալ պէլերն ու պաշտօնատարները սեղական իշխանութեանց անհոգութեամբ արձակուած ըլլալով, Գաղղիոյ և Գերմանիոյ կառավարութիւնք գանդաւառ ուղղուեր են Բ. Դրան, և Բ. Դրան ալ հրաման զրկուի է որ յիշեալ անձինք վերստին ձերբակալուելով իրենց պատիժը լրայնեն :

Մայրաքաղաքիս թուրք թերթերը կը ծանուցանեն թէ Եգիպտոսի

խտիլը 12000 նոր զօրք զրկուել կը պարտաւորի :

Օգոստ. 10 թուով հրատարակեալ Հնդկական լրագրք կը ծանուցանեն թէ Բլէյնայի և Էսկի Զաղրայի յաղթութեանց լուրերուն վրայ՝ կալկաթայի և Պոմպայի մէջ ուրախութեան տօն կատարուեր և միլիթները լուսավառութիւն ըրեր են :

Հինգշաբթի օրը Բուսէլի երկաթուղին 238 վիրաւոր զօրական բերաւ Արքիանուպոլէն :

Տրապիզոնի Աւստրիական շոգենաւը վերջին անգամ Կ. Պօլիս եկած ժամանակ, ճանապարհորդներէն մին տեսեր է որ իւր մտուկը բացուելով յիսուն լիւրայի արժողութեամբ Քարպօլանց, Մէճիտիլէ և այլ դրամներ գողցուեր էին, ուստի նաւապետին կը դանդաղատի : Երկու պաշտպաններու վրայ կոսկած ըլլալով, նաւապետը շոգենաւին մէջ գտնուող փաշայի մը կը ծանուցանէ. նա ալ յօժարութեամբ նաւապետին հետ միանալով երկու պաշտպանները կը հարցաքննեն և վրանին նայելով գողցուած ստակները կը գտնեն :

Սոյն իրողութիւնը կը տեղեկագրուի, և շոգենաւը Կ. Պօլիս հասած ժամանակ երկու գողերն ոստիկանութեան կը յանձնուին :

Այս առաւօտ ժամը 10ին միջոցները Ղալաթիա Մոմհանէի մեծ փողոցն արևրի վաճառատան մը մէջէ հրդեհ ելնելով շէնքն և 1500 պարկ սիւր պրեկցան :

Table with 2 columns: ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ԷՍԷԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ, 2 սեպտ. ուրբաթ իրիկուն, 3 սեպտ. շաբաթ առաւօտ, Բուսէլի երկաթուղի, Թղթագրամ, Ստիթի Ելէնարալի բաժ. Անգլ. լիւր., Փօլսանականութեան, Կ. Պօլսոյ Պաշային, Քրէտի Ելէնարալ, Քրէտի Օթթոմօ-Թիւրք, Փօլս., Թրամուայ, ԸՆԹԱՅԲ ԳՐԱՄՈՑ, 2 Այստեմբեր, Անգլ. լիւր., Նորօրն ոսկի, Խմէտիալ Ռուս, Գրքերից, Հինգ ֆրանք, Հինգնոց, Պղնձ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Աղգային ժողովը երէկ գումարեցաւ Մայր եկեղեցին :

Ս. Պատրիարք հայրն անձնական սկարութեան պատճառաւ ներկայ չէր ժողովին :

Ատեանը ժամ 7 1/2 ին բացուելով ատենապետ Վսեմ Բ. Նուրեան էֆէնտին գրաւոր կերպիւ լայտարարեց թէ նախընթաց նստին մէջ Ս. Փափաղեան էֆէնտի անկարգ և թշնամանալիւր ձևով մը Պատրիարքական փոխանորդն ամբաստանելու ելնելով ժողովին մէջ աղմուկ յարուցանելու պատճառ եղաւ՝ առանց իւր ըրած աղբարարութեանց ունին Ս. Փափաղեան էֆէնտի անկարգ և որով ինքն ալ ատենը գոցուելու հարկադրուեցաւ :

Ասոր վրայ փափաղեան էֆէնտի և այլ քանի մ'ինքզինքնին ձախակողման անուանող երեսփոխանք աղա-

ղակ բառնալով խօսք ուղեցին, և պահ մը Աղգային ժողովոյ ատենը նպարավաճառաց ժողովարան դարձուցին, բայց ատենապետն անյողգող կեցաւ և խօսք չառաւ՝ յայտնելով թէ դիւանին ապօրէն նկատած մէկ դօրը պաշտպանելու համար ու է մէկու մը խօսք չկրնար տալ :

Յետոյ մեր և մեզ հետ երեք երեսփոխանաց ստորագրութեամբ հետեալ հարցուումը դիւանին տրուելով՝ կարգադրուեցաւ .

« Վսեմ. Պաննապետ Աղգային ժողովոյ .

« Ներկայ քաղաքական տողնապալից պարագաներուն մէջ, մինչդեռ Հայոց աղբն իւր առ Օսմանեան պետութիւնն ունեցած դարաւոր հաւատարմութեան ու անձնուրութեան նորանոր փորձեր տալով տէրութեան ինամքն ու պաշտպանութիւնը վայելելու իրաւամբ արժանի ըլլալն աշխարհի ցոյց կուտայ, ցաւալի է տեսնել Հայ թերթ մը, որ իւր վերջին քանի մը թիւերով ազգին մէջ քաղաքական կասկածելի նպատակներու ծառայող կարգ մ'անձինք կակնարկէ եկեղեցական և աշխարհական, որք իւր թէ մինչև իսկ Աղգային ժողովոյ և Ս. Պատրիարք հօր վրայ աղբեցուցութիւն բանեցնելով իրենց դիւանանց հասնելու կը նկերտին եղբր :

« Այսպիսի անպատեհ և անտեղի հրատարակութիւն մը՝ թէ և չկրնար Հայոց աղբիս մինչև այսօր անբարտ պահած անգրգռուելի հաւատարմութեան համբաւն աղարտել, կրնայ սակայն աղբայնոց զգացումը վիրաւորել և օտարաց ալ գայթակղութեան առիթ ըլլալ :

« Տեսնաք թէ և որ Պատրիարքարանն յիշեալ ձևով հրատարակութիւնն ի պաշտօնէ հերքելով ազգայնոց վրայ ըրած տխուր ազդեցութիւնը մասամբ փարատեց, բայց կրփափաքինք գիտնալ թէ անոր ազդեցութիւնը բոլորովն ջնջուելու համար աղգային վարչութիւնն ուրիշ ինչ միջոց ի գործ դրաւ, և թէ կըրնանք արգեօք ժողովոյս հաղորդել »

Վարչութեան Գաղ. ժողովոյ ատենապետ Գօրօբեան Աւետիս էֆէնտին ինքեղեց որ սոյն գրաւոր հարցումը վարչութեան լրկուի, որպէս զի վարչութիւնն ալ պէտք եղած պատասխանը բերէ :

Յետոյ փափաղեան Ս. էֆէնտին ամբաստանադիր մը ներկայացուց Պատրիարքական փոխանորդին դէմ, պահանջելով միանգամայն որ փոխանորդական պաշտօնէն դադարի : Միւս կողմէ փոխանորդ հայրն ալ բողոքադիր մը մատոյց՝ անյապաղ քննութիւն և դատատան պահանջելով իւր անձին և պատուոյն նկատմամբ եղած թշնամանալիւր ամբաստանութեանց :

Ժողովը՝ առանց փափաղեան էֆէնտի պահանջած պաշտօնանկութիւնն ընդունելու՝ յատուկ յանձնաժողով մը միջոցաւ գործը քըննելու որոշում տուաւ :

Սոյն միջոցին երեսփոխաններէն շատեր մեկնելով, ատենը ժամ 9 1/2 ին գոցուեցաւ 15 օրէն գումարուելու որոշմամբ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՍՄԱԿԱՆԻ

Օրակարգ. — 1. Վարժապետ Ժեմալ Խեմալի — 2. Տէրբէն Երանոսեան — 3. Անուշ Գեղը կապիւլու Գաղաթականութեան — 4. Առանց օրէնքի վարչութիւնն :

Աղիւ Մարտիս. Կը յիշեմ որ յօղուածոցս միոյն մէջ

Խարթալի վարժապետական խնդիրը կուսակցական խնդիր անուանած էի :

Վարժապետ ճեճէլ և թշնամաներն սկզբում անարդարանալի է :

Սակայն խարթալի խնդիրն իւր սրբազաններուն նայելով տարբեր իրողութիւն մ'է, որուն չեմ ուզեր անդրադառնալ :

Անցեալ տարի 'ի խաղաղ թագաւոր շրջապատ միտն կողմէ Մինաս Չէրազէ Կէնիւնի ճեճուեցաւ, որ բառին ճիշդ նշանակութեամբ ազգային վարժապետ մ'է և իւր հմտութեամբ և բարոյականով յամենից պատուեալ :

Բանիցս բողոքեց աւ և հատուցում պահանջեց. ո՛ր մնաց այդ խնդիրն և ի՞նչ կըլաւ սոյն արդար բողոքը . . . :

Հերոն՝ Մանուկան Տիգրան Կէնիւնի ինքնապատիւ թագաւոր խորհրդայ տակնայեան ճեճուեցաւ :

Սա ևս արժանաւոր վարժապետ մ'է, իւր հմտութեամբ և բարոյականով յամենից վկայեալ :

Այս ալ բողոքեց :

Այլ ի՞նչ որ առանց օրինաւոր պատճառի և թաղային ամուլ կուսակցութեան և եթ զոր զացող ճեճուեցաւ վարժապետներ յանդիման պաշտօնանկ կըլան, բողոքեցին, և ընտրութիւն ու պատաստան խնդրեցին :

Ուրիշ անհրաժեշտութիւն մ'ալ :

Ենթադրուի երկուստ վարժարանաց տեսուչը՝ որ անորոճ երկուստարք մ'է, զարցոյցն մէջ աղայ մը կը ճեճէ չարաչար. կատապոլիչը դիտողութիւն կընէ և 'ի կարգ կը հրաւիրէ. տեսուչը զիս կը պահէ և թաղին բազմամեայ աշխատաւոր կատապոլիչը պաշտօնէն կը զրկուի, անորոճ կը մնայ, կը թափառի, և իւր ընտանեաց հետ կը առաւայի :

Ո՞վ կարեւորութիւն ընծայեց ասոնց. ո՛ր մնացին յիշեալ բողոքներն. ինչո՞ւ ընտրութեան չեմ թարկեցան և այս իրութիւններն հրատարակու կատարուած առեւն ո՛ր էին դատարարութեան աստիճաններն, որ խարթալի ժամուցեալ զէպըք միայն մատուցին վարժարան մ'ալ. ժողովն ու հրատարակող գումարը զոչուսով լցուցին :

Այս իրողութեանց առջև կարծեմ հարկ չմտար ապացուցանելու թէ Ղայաթիոյ խորհրդին նպատակը վարժապետական պատուոց նախանձանդութիւնն է :

Այս ըսածս կենդանի օրինակաւ մ'ալ հաստատուի :

Այդ անձինքը, խորհրդին անդամներն ըսել կուզեմ, 73ի վարչութեան մէջ զըստուած ատենին Մայր վարժարանի դատարանէն միտն վրայ՝ որ Մատիսի միջոցաւ վարչութեան արարքը կը քննադատէր, իրենց մէջ անդամակցին ճեճուեցաւ և ազգայնութիւն բանեցնելու ելլան :

Այս իրողութիւնն այն ատեն յիշեալ պատաստին ստորագրութեամբն հրատարակուած է Մատիսի մէջ :

Ահա դատարարութեան կարծեցեալ պաշտպաններուն արարքը :

Գատարարութեան նախկին անձանց պատիւը պաշտպանել և նոցա ներկայն ու ապագայն անդորրելն ազգային վեհով պարտաւարութիւն մ'է :

Եւրոպական սղոյաց մէջ այդ պարտաւարութիւնը բառին ճիշդ նշանակութեամբն 'ի գործ կը դրուի. իսկ մեր մէջ ցնորք մ'է տակաւին :

Բուսանիոյ հասարակաց կրթութեան նախարարն երկու տարի առաջ ստանց պատճառի վարժապետ մը փոխելուն համար երեսփոխանական ժողովին մէջ հարցում կըլաւ և նախարարն իր պաշտօնէն ինկաւ :

Մեր մէջ ալ ճիշդ այսպէս չ'արդեօք : — Է՛հ, բողոքատուութիւն անգամ չը վերցնեն :

Մեր մէջ ուժ ունեցողը կը գործէ, կատարուած իրողութիւնը ետ չլուծուար, տկարին իրաւունքը զո՛հ կերթայ, և ազգայնութիւնը տիրող օրէնք է :

Ամեն գործ պատճառի մը կատարուած է : Գործը չվերադար, եթէ պատճառը մէջ տեղէն չընտրի :

Ամեն բան հիմնն պէտք է ընել, զի ջուրը սկէն կը ըլլի :

Մինչև հիմա շատ անհրաժեշտութիւններ դործուած և բազում ազգային շահեր և իրաւունք զո՛հ դնացած են. սակայն ո՛ր և էր արդար ընտրութիւն ու դատաստան կատարուած և իրաւունքն երեւան կըլած է :

Եթէ չափազանցութիւն չլինէր, յորմէ կ'իզուէնամ, վարչութիւնը կարծեմ շատ անգամ ճեճուեցաւ կըլած է 'ի վնասու կար սկզբունքին հետեւելով՝ անուշ ազգը կապել ջանացած է, այնպէս որ հասարակաց առած մը դարձած է սա խօսքը թէ՛ իրաւունքը կորսնցնել ուզողը թո՛ղ վարչութեան զիսէ :

Անուշ տեղը կապելու հիմունքը քաղաքականութիւնն՝ որ ծնունդ է չարին հակառակ չկենալու անտարանական օրտւելելն, շատ ծուռ մեկնուած է :

Յիշեալ պատուէրն հասարակաց շահերն ու իրաւունքները զո՛հ շատ չեմ յիշարք. երբեք. նորա ոգին շատ տարբեր է, զոր բացատրելն անգամ աւելորդ կը համարիմ :

Ասոնց ամենքը վեղճուեցան են, որք կան և պիտի լինին, և ես բնաւ չեմ դարմանար. վասն զի ո՛ր որ օրէնք և նորա անթերի դործարարութիւնն երաշխաւորող հսկողութիւն չկայ, հոն վեղճում գործըւելն անակողմելի է :

Ի՞նչ տարբերութիւն ունի մեր ազգային արդի վիճակը նոյս քան զՄահմանդութիւնն ունեցած վիճակէն :

Հին ատենները վեղճուեցան կը գործէին, ազգային իրաւունք և շահեր կ'որոշէին, ազգային իրաւունքը և շահեր կ'որոշէին, զի իրաւունք և արդարութիւն չկար, և շատ ստուկ ունեցողն ամիսը և նորա կամքն օրէնք և հասցիքն արդարութիւն էր :

Մահմանադրութիւնն յարկեց, և հիմա ալ Մահմանադրութեան քողին ներքեւ բռնակալութիւն կը տիրէ, և զարմանալին այն է որ բազում ապօրինութիւնք յանուն ժողովրդեան կը գործուին և ահա Ազգը Մահմանադրական է :

Որո՞ն է յանցանքը. — Մահմանադրութեան. — ո՛չ. — հապա դրութեան է :

Եւ ո՞րն է այդ դրութիւնը. — Առանց օրէնքի վարչութիւն ունենալն, որ հին դրութեանէն բնաւ տարբերութիւն չունի :

Աստի ժամ է որ այդ վիճակին վախճան տրուի :

Ի՞նչ պէտք է ուրեմն. — Օրէնք :

Օրէնք ամեն բանի համար. զի ի՞նչ որ օրինօք արդիւեալ չէ, ներկի է : Աւրեմն յանցանքը ոչ խորհրդին է, ոչ ժողովրդեան, ոչ ասորն և ոչ անորն, այլ միայն արդի դրութեան :

Եղևիսիոյ Ռուբինեան վարժարանի անօրէնութեան կողմէ հետեւեալ նամակին հրատարակութիւնը լընդորուած է մեզին :

... Տէր .

Փետր 1905 թուոյն մէջ, Եղևիսիոյ երկուստարք մը յուլիս 20 թուով մի նամակը կարդայինք, և ցուցեցանք ոչ գրուածոցն՝ այլ զբոլորն փրայ, որ թերևս քանի մը անխիճ ու նախանձակիր անձանց ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ հրատարակուած, անփորձ երեսփոխարքը զիճած էր այնպիսի նամակ մը գրել, յորում կ'նկարէր յայտնի ճշմարտութիւնները խեղաթիւրելով հանդերձ քանի մը ստոյ ալ օգնութեամբ ստոր անոր պատիւը կամ համբաւը վար դարնէլ :

Ճշմարտութեան մերկ եղող յիշեալ նամակին գրաբանութեանց պատասխանել որչափ որ չէր արժեր, սակայն մեր հետաւոր ընթերցող ազգայնաց կարծիքը զրուած ստոյ պաշարումէն դերձ պահելու համար, հարկ կը համարինք իրական ճշմարտութեամբ և նոյն իսկ Պ. նամակազրին բանիք մեզ վերաբերեալ քանի մը գլխաւոր ստուերը նշուակել :

Պ. նամակազրին Փետր 1181 թուոյն մէջ հրատարակու պաշտօնական նամակ կը ձևար ստեղծով Ռուբինեան վարժարանի մայիս 1ին կատարուած հանդիսին

համար «չեղ էր, բայց քանի մը թերութիւններ ունէր» կրտ : Թերութիւններն ալ աւ են եղեր թէ մի գասատուն մէկ կողմ չէ քաղուեր որ հրատարակ վարժապետներն աշակերտաց դասերը տեսնեն : Պ. նամակազրին պէտք էր զիտնու որ նոյն օրը տարեկան ընտրութեան շրջանագրուէր չէր, ինչպէս ինքը կըլած, այլ տարեգարծի պարզ հանգէս մ'էր, որ ժողովրդին հայրենասիրական զգացումն պիտի զարթոց համար սովորաբար կը կատարուի, և հետեւաբար հոն քննիչ պէտք չէ, այլ ունիւղիւր, և մի գասատուն ընթերցմանց բեմին մօտ դանուիւն անհրաժեշտ պէտք էր ներկայացմանց կանոնադրութեան հսկելու :

Պ. նամակազրին կը յիշէ նաև թէ Ռուբինեան վարժարանի մէջ «Եղևիսիոյ Հանդէս» և «Ազգային Եղևիսիոյ» անուամբ թերթեր կը հրատարակուին՝ որոց համար կըլած : «այդ թերթերը դեռ չտեսնուեցան թէ զիբըք ի՞նչպէս և պարունակութիւնը ի՞նչ է» : Ի վերջոյ ալ կը խօսի, իրբու թէ հրատարակեալ թերթերն արկղին մէջ կը բանտարկուին. ուրեմն այս խօսքերն ըսող միևնոյն անձն ի՞նչ փաստով կը համարձակի նաև դրել թէ յիշեալ թերթերուն մէջ Հայկազեան ընկերութիւնը կը պատարակուի և թագաւորեան և Ամենեան Ենթնադրութիւնը կը գովուին, քանի որ ինքը իւր խօսքով կը վկայէ թէ նոյն թերթերուն ոչ զիբըք և ոչ պարունակութիւնը չեն տեսնուած, որով հակասութեան մէջ կը նեղէ ինքզինքը : Բայց վասն զի բողոքովն անգոյ են իւր այդ գրածներն, ըստ որում Պ. Գ. Կ. Ոսկերչեանի թերթերն ողջամիտ ու աննախանձ ընթերցողը շարունակ կը կարդան, և գիտեն որ անոնց մէջ ոչ Հայկազեանի համար պատարակութիւն, և ոչ այլոց համար գովուող չապրութիւն կան երբէք :

Բան է որ Պ. նամակազրին խոճի կուրութեամբ խօսածներն զրու զարարուած թիւն լինելով, միայն Պ. Ոսկերչեանի գրուածներն և Ամենեան ու թագաւորեան Ենթնադրութիւնն յանդիման անուամբ կը գրուած են :

Պ. նամակազրին նաև պարտի դիտնալ որ իւր գրչին արժէքը պաշտօնական նամակաց վարկին դէմ չկրնար մրցիլ :

Փետր միևնոյն նամակին մէջ Մըլիթարեան Խորէն սրբազանի համար լուր գրուած էր : Տեղեցոյ ժողովուրդը ջերմ փափաքանօք կ'սպասէ սրբազանին, և մեծ յոյս ունի որ իւր ապագայն երջանիկ պիտի ըլլայ՝ նորին Սրբազանութեան հայրախընամ ու արթուն հսկողութեան շնորհիւ :

Մեծ. Տէր, բարեհաճեցէք վերերկայս 'ի սեր ճշմարտութեան, ապիւր Մատիսիգ մի անկիւնը գետեղել, ընդունելով Տընորէնութեան անկեղծ յարգանքը :

11 օգոստ. 1877 որով մնամք . . . Ռուբինեան վարժարան . . . Եղևիսիա

Ե. Օ. Գ

Յուսակից կիրակի, սեպտ. 4. թաղիս Ս. Յօհաննու Աւետարանչի եկեղեցոյն օժման առաջին տարեգարծի օրն ըլլալուն, յատուկ հրատարակու Ամենապատիւ Մկրտիչ սըրբազան արքեպիսկոպոս խորհեան հանդերձեալ է Ս. անմահ պատարագ մատուցանել. վասնորոյ կը հրատարակու քարեպաշտ զազգայինս որ փութան որոշեալ օրը ներկայ գրուեսիլ նոյն եկեղեցական հանդիսին և հօգև որապէս միութարու լի ազգութարողութեամբ պատարագ մատուցայ Ամենապատիւ Սրբազանի :

'ի գիմաց թագաւոր խորհրդայ 2 սեպտ. 1877 վասն Առեւտարանի կէտիկ փաշայ Երանուէն Եսէֆեան

\* Կարծենք Պ. նամակազրին Փետր 1181 թուոյն մէջ հրատարակեալ նամակը յիշակ չէ կրցեր կարդալ, ուր կըսուի թէ Պ. Ոսկերչեանի հեղինակութեամբ այժմու հրատարակուածը Հայկ անուն թերթ մ'է :

ՆՈՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Մեզ դիտելն և ճանկերէնի վարժապետու մը պատրաստ է դասախօսել զպրոցաց և տուներու մէջ խիտ գիւրամատչելի գնով : Ուսանողք իւր բնակութիւնն իմանալու համար կրնան մեր տպարանը դիմել :

ՆՈՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Այս պատուական գիրքն այս անգամ շնորհիւ Գեր. Խորէն եպիսկոպոսի Միսիթարեան գրաբանէն համապատուութեամբ աշխարհաբար թարգմանուելով, իլմիրի Տէպէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայեցաւ մաքուր տպագրութեամբ : Թուսայի է որ այժմ անմահ գործը մեծ ընդունելութիւն պիտի գտնէ ազգային վարժարաններէն և ընթերցասէր հասարակութեանէն :

Գիրքը կազմեալ և 316 երեսէ բաղկացեալ ըլլալով՝ կը լուծուի Ենթնադրութեան Զիլիկիլիքը ճատտէսի թիւ 2 Ս. Գ. և Եղևիսիոյ գրատունը և ուրիշ գրավաճառաց քով : Գին 3 ֆր.

Տ Է Ք Ա Ր Դ Ա Յ

Ճ Ա Ռ Ո Ճ Ո Յ

ԲՆԱԶԱՆՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՔ

Տէրարդ Գաղղիացի մեծանուն վիլիսովային «Գլուխ գործոցն» է, որ Մեծ. Առաքել Շարայլանեանի աշխատասիրութեամբ Հայերէնի թարգմանուելով՝ Արմաշու վանքէն հրատարակուեցաւ գեղեցիկ տպագրութեամբ :

Այս գիրքը 272 երեսէ կը բաղկանայ և կը ծախուի Ենթնադրութեան Զիլիկիլիքը ճատտէսի թիւ 2 Ս. Գ. և Եղևիսիոյ գրատունը և գրավաճառաց քով : Գին 2 ֆրանք.

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՍՍԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՅՈՅ

Ի պէտս նախալընտան դասուց Աղբ. վարժարանաց

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՍՍԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՅՈՅ

Ի պէտս վարժարան դասուց Աղբ. վարժարանաց

ՅՕՐԻՆԵԱՅ

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊՈՒԿՈՊՈՅ ՆԱՐ ՊԵՅՑ

Առաջարկութեամբ և վաւերացմամբ Աղբայն Կրօնական Ժողովոյ

Տպագրեալ հրատանաւ

Տ. ՆԵՐՍԵՍԻ Ս. ՊԵՏՐՈՍԻ Կ. ՊՈԼՍՈՅ

Կը ծախուի ամեն գրավաճառաց խանութներն 'ի գին :

Նախնական Գրատունական 50 սանդիւմ կրթական Գրատունական 80 սանդիւմ :

Կեղրոնատեղին է Փարիզու գրատունը, Չազմազմըլար. — Յակորեան խան թիւ 15 :

Գպրոցաց համար մեծ քանակութեամբ գնողներուն հարկերն 10 զեղջ պիտի ըլլայ :

Ո. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա Ռ Ա Չ Ի Ն Տ Ե Ր Ե Ի Ք

Բերնուէ, Մահ Սուրբապ, Ճատտէս, Այլու այլ, Յատուած :

Հեղինակն իւր ինչ ինչ ստանաւոր և արձակ գրուածներն և լատարակին Գաղղիացի բանաստեղծին Մահարայ Գահուն գրաբար տաղաչափեալ թարգմանութիւնն ամբողջած է սոյն զըլբուկին մէջ :

Կը ծախուի Ենթնադրութեան Զիլիկիլիքը ճատտէսի թիւ 2, Ս. Գ. և Եղևիսիոյ գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով :

Գին 1 քաննոց թուղթ

